№ 59 Յունիսի 9 Շաբաթ 1884 Յունիսի 9 Շաբաթ № 59

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція «Мшакъ»*.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Հին-Նախիջևանից։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ժողովրդական ուսումնարանի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 30-ին

Մեր Հին—Նախիջևանը ամենահին քաղաքներից մէկն է։ Թէ մովսիական և թէ հայկական առանդութիւնը Նախիջևանի հիմնադիրը համարում է Նոյ նահապետին, և իրաւունք էլ ունի համարելու, քանի որ Մեծ-Հայքի մէջ չէ կարելի գտնել այնպիսի մի երկիր, որ Նախիջևանից առելի աւատ պտղաբերութիւն ունենայ։

Հին-Նախիջևան քաղաքում բնակվում են հայեր և թուրքեր. թէև թուրքերը քառապատիկ չատ են հայերից, բայց քաղաքի գլխաւոր հարստութիւնը գտնվում է հայերի ձեռքին, որոնք ամենայն տարի գնում են թուրքերից նրանց սեպհականութիւնը. մի խօսքով Հ.-Նախիջևանի հայերը տարից տարի ստանում են իրենց նիւթական վիճակը, իսկ թուրքերը զրկվելով նիւթական միջոցից աղքատանում են։

Նախիջևանի հայերի և թուրքերի յարաբերութիւնը չատ հետաքրքիր է և մի և նոյն ժամանակ արժանի լրագրութեան ուշադրութեան, բայց թողնելով այդ մի յարմար ժամանակի այժմ սիրի գրեմ երկու դէպքի մասին։ Նախիջևանը հին քաղաք է, հնութեան մէջ ծածկված և միչտ հնութեան փէչը ձեռին բռնած, երբեք չէ կամենում հնութիւնը թօթափել և մի քանի քայլ առաջ գնալով ազատ չունչ քաշել։ Հ.-Նախիջևանցու համար փիթած հինը սուրբ է, իսկ լուսաւորութիւն խոստացող նորը սիղդ է և օրինաց հակառակ։ Նախիջևանի երիտասարդութեան մեծամասնութիւնը ամենայն իրականութիւն և մինչև անգամ գոյութեան կռիւը գերբնականի զօրութեամբ է բացատրում։ Հին-Նախիջևանը հին ժողովուրդ ունի։

Բայց, այնուամենայնիւ, ձեռքը խղճին դրած պէտք է խոստովանել, որ 1882 թուականից ըսկսած Նախիջևանը մի շօշափելի քայլ է անում և այդ ուսումնարանի և թատրոնի միջոցաւ է։ 1882 թուականին Նախիջևանը բաղդ ունեցաւ տեսնել իր առաջնորդական դահլի վրա Նախիջևանի ամենայն մի անհատին սիրելի երջանկայիշատակ Յովհաննէս վարդապետ Երեմեանին։ Հայը ցաւրը իր ամենօրեայ քարոզներով ժողովրդի ուշադրութիւնը դրաւեց ուսումնարանի վրա և տարիներով փակված ուսումնարանի Ա. և Բ. պատրաստականը բացեց, որը մինչև այսօր իր ժրաջան ուսումնարանի պաշտպան պ. պ. Ադամեանի, Բաբախանեանի և Թիմնեանի հոգատարութեան ներքոյ կանոնաւորութեան աստիճանին է հասել։ Պ. պ. հոգաբարձուները իրանց վերջին կօպէկը և աշխատութիւնը չեն խնայում ուսումնարանի յառաջադիմութեան համար, այնպէս որ Նախիջևանի ժողովուրդը (մեծ մասը) ուսման յարգը չը ճանաչելով, հոգաբարձուները ստիպված են իրենց գործը թողնել և ամենայն մի մարդու զբաղմունքը երեմիական կարգալ, որ որդին ուսումնարան ուղարկի, իսկ նրանք, որոնք իրանց որդին ուսումնարան են տուել, վախենալով որ չը լինի թէ հոգաբարձուները իրենց փողերը ուտեն՝ անտեղի, անժամանակ հաչիւ են պահանջում։ Այսպէս պատահեցաւ ամսոյս 13-ին։ Մօտ 60 հոգի ստորագրվել էին հաչիւ պահանջելու, իսկ նշանակված ժամանակին, այսինքն 13-ին, ներկայ գտնվեցան միայն 24 հոգի, որոնցից 15-ը երիտասարդներ էին. սա արդէն նշանակում է, որ նախիջևանցու սրտին մօտիկ չէ ուսումնարանը։ Ժողովում պ. Ադամեանը ներկայացրեց ուսումնարանի եկամուտի մանրամասն հաչիւը և բոլորը զոհ մնացին։ Յետոյ պ. պ. Ադամեանը և Բաբախանեանը ժողովրդականներին առաջարկեցին գտնելու միջոցներ, որով կարողանան ուսումնարանի վիճակը ապահովել։ Գտնվեցաւ երկու գլխաւոր միջոց. առաջինը՝ մի քանի ժամանակ սրանից առաջ ստորագրութիւն բացվեցաւ, որ ամենայն մի մարդ ուսումնարանի մի որոշեալ գումար նուիրէ. ստորագրողներից մի քանիսը տուել են, իսկ մեծ մասը չեն բարեհաճում տալ։ Ժողովականները խնդրեցին հոգաբարձութեան, որ մի կերպով այդ ապառիկները հաւաքեն և չահեցնեն. երկրորդ՝ թիմբուլցի մի հարուստ անդաւակ մարդ, մօտ օրերս մեռնելով, մեր ուսումնարանին կտակել է 5000 ր., որի ձեռք բերելը նոյնպէս հոգաբարձուների վրա թողին, բայց, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացել եմ, հանգուցեալի բարեկամները ասում են, որ հանգուցեալը միայն պարտամուրհակներ է թողել, և իրենք ևս չունենալով կանխիկ դրամ 6000 բուբլու մի պարտամուրհակ են առաջարկում մեր ուսումնարանին, որի համար հոգաբարձութիւնը հոգս է անում։ Այս 13-ի ժողովում Ադամեանը նոյնպէս առաջարկեց, որ հոգաբարձուների թիւը չատացնեն և ընտրեն այնպիսի անձինք, որ ժողովրդի սրտին մօտիկ լինելով կարողանան գործել։ Ընդհանուր (ընդհանուր ասելով պիտի հասկանալ 24 հոգի, որոնցից 15 երիտասարդներ, ուրեմն 9 հոգի որ ձայն ունէին) համաձայնութեամբ ընտրեցին պ. պ. Մելիք-Թանգեանին, Գասպարբեկեանին, Բախչեանցին և Մկրտչեանին, որոնց վրա նոյն յոյսը ունենք, ինչ որ ունենք պ. պ. Ադամեանի և Բաբախանեանի վրա։

Ժողովը առհասարակ լաւ էր, որովհետև ամենայն մի անհատ իր կարծիքները համարձակ յայտնում էր, հաչիւ էր պահանջում. իսկ երբ պ. Բաբախանեանը ասաց թէ ուսումնարանի ծախքը թեթեացնողը մասամբ թատրոնն է և դրա համար պէտք է թատրոնական դահլիճը մեծացնել և ինքը խոստացաւ ծախքի $^1/_5$ մասը իր վրա առնել, այն ժամանակ սենեակը դատարկվեցաւ, միայն մնացին հոգաբարձուները՝ բացառութեամբ մէկի, և մի քանի երիտասարդներ. այս փախուստը այնպէս անակնկալ եղաւ, որ մինչև անգամ շատերը իրենց գլխարկները մոռացան և բակի երեխաների միջոցաւ ձեռք ձգեցին։ Անհաւատիկ մերոնք որ հաչիւ պահանջելու ժամանակ քաջ են, իսկ երբ մէջ տեղ փող պիտի խաղայ՝ խոյս տուող են։

Ժողովի սկզբից մինչև վերջ բոլորը ատելութեամբ խօսում էին մի մարդու վրա, ս. սինոդի տեղակալի ու մեր ս. առաջնորդի վրա, որի ետևից՝ դեռ ժողովը չը սկսած, մի քանի մարդ ուղարկեցին որ գայ ներկայ գտնվի, իսկ սրբազան առաջնորդը մերժեց ասելով՝ «լրհա ինչ յոր օղումըք արէք, իմ յընչուս ա պէտք»...։ Երբ հայր Երեմեանը վախճանվեց, մենք լսեցինք որ ուղարկում են մեզ համար առաջնորդ այս սրբազանին. չը կամեցանք ու մի հեռագիր ուղակեցինք ս. սինոդին և մէկն էլ նոյն իսկ մեր առաջնորդացուին, որ չը գայ, բայց ով լսեց մեր բողոքը,—ոչ ոք։ Ս. Սինոդը բարեհաճեց և մեր առաջնորդը եկաւ, որովհետև մենք կոյր ժողովուրդ էինք։

Այն եկեղեցին, ուր թնդում էին Երեմեանի քարոզները, սրա ժամանակ մեռելութեան է հասել։ Առաջնորդարանը՝ որ հանգուցեալի ժամանակ լիքն էր լինում պատուաւոր մարդիկներով, սրա ժամանակ պատուաւորներին անմերձենալի է... Մի խօսքով մեր ս. առաջնորդի վրա գաղափար կազմելու համար թող մէկը գնա նրա մօտ և կը լսի միայն նրա թէյրան, Սալմաստ եղած ժամանակի կատարած ջաջագործութիւնները, կամ այս ինչը լաւ փլաւ է եփում, այն ինչը լաւ քիւվթայ և այլն, իսկ մի վայել և կարգին խօսք ընաւ չի լսի։ Առաջնորդից այն աստիճան զզուել են նախիջևանցիք, որ մի քանի անգամ առաջարկեցին նրան, որ թողնի գնայ, բայց տեսնելով որ չէ գնում, առաջարկեցին որ գոնէ գնայ հին եկեղեցու (որը քաղաքիս յետ ընկած մասումն է) բակումը ապրի, որի համար սրբազանը ասաց՝ «լաւ, ես կը քինամ, համա մրդին (բարտուղար) ասեմ էջմիածնայ Սինոթին գրի յոր դիւանխանան (կառավարութիւն) ալ տանի ընտեղ... Համա մին պանրմ ասում, ինձ մին գոմատեղ տուէք ձի, կով, հաւ ըմ պահելու»...։ Խնդրում ենք ս. Սինոդին ուշադրութիւն դարձնել մեր Յովհաննէս սրբազանի վրա. մեզ պէտք չէ ձի, հաւ և կով պահող կամ, ինչպէս Գրիգոր եպիսկոպոս Ցաթեացին ասաց «բօստանչի» առաջնորդ, մեզ պէտք է մի հասկացող առաջնորդ. մենք՝ նախիջևանցիներս ցանկանում ենք մեր առաջնորդա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

(Նուէր հայ մանուղէտ մանկավարժներին)

—

Ժողովրդական ուսումնարանների գործի զարգացման մէջ, ամենամեծ պատիւը պատկանում է Պեստալոցցիին, որ մանկավարժութեան պատմութեան մէջ մի անհերքելի ճշմարտութիւն է։ Այդ մարդուն իրաւամբ պատկանում է «հայր նոր մանկավարժութեան» պանծալի կոչումը։ Այլ և աչքի առաջ ունենալով Պեստալոցցիի ամբողջ կեանքը և գործունէութիւնը, չէ կարելի չը համաձայնվել Պայլմերի հետ, որը նրան համարում է և մարտիրոս և փրկիչ մանկավարժութեան։ «Լինգարտ և Գերտրուդայի» նշանաւոր հեղինակը որոշեց այնպիսի էական կէտեր և հիմունքներ, որոնց վրա հիմնվելով, մանկավարժութիւնը կարող է հասնել թէ տեսական և թէ գործնական կատարելութեան։ Ցիլլէր համեմատելով Պեստալոցցիին և Բուսսօին, ասում է.—«Ինչպէս, ըստ Բուսսօի, նոյնպէս և ըստ Պեստալոցցիի, մարդը իր բնական վիճակից անցնում է հասարակականը. թէ առաջինի և թէ վերջինի կարծիքով այդ բնական վիճակը աւելի երջանիկ, երանելի է, իսկ հասարակականը պակաս կատարեալ, որը և է չատ, կամ աւելի ճիշտ, իւրաքանչիւր չարիքի աղբիւրը։ Բայց հէնց այդտեղ այդ երկուսի ճանապարհները բաժանվում են։ Որովհետև Բուսսօն հասարակական պայմանների մէջ տեսնում է միմիայն մարդկային կեցութեան վատանալը, այս պատճառով պահանջում է անդրադարձումն դէպի բնական վիճակը. իսկ Պեստալոցցին ընդհակառակը անհրաժեշտ է համարում ոչ թէ դէպի յետ, այլ դէպի յառաջ գնալը...։ Բուսսօի հայեացքը տանում է դէպի արտաքին քաղաքական յեղափոխութիւն, իսկ Պեստալոցցին պահանջում է ներքին բարոյական կերպարանափոխութիւն, որով և հարկաւոր է համարում համեմատել բոլոր շրջապատող այդ հասարակական պայմանները»։ Սրանով Ցիլլէրը մատնացոյց արաւ այն կէտի վրա, որով Պեստալոցցին նախկին դաստիարակութեան ահմանից դուրս եկաւ։

Ընթերցողներից նրանք, որոնք ծանօթ են այս ուղղութեան, որի առաջնորդն է Բուսսօն, գիտեն որ այդ մարդու իր ժամանակին եւրօպական մըտաւոր աշխարհը թնդացնող կարծիքները գլխաւորապէս հետևանք են նոյն ժամանակի քանի մի շարք սխալ ուղղութեանց, որոնք տիրապետում էին կրթութեան մէջ։ «Ամենիկին բաւական է իմանալ այն, ինչ որ ինքը տեսնում է»։—Յայտնի է, որ Բազեդովը *) նմանապէս սանիկին հարկաւոր էր համարում տալ այնքան, որքան՝ և որը պէտք է կեցութեան մէջ, և այն առանց հիմնական պրինցիպների, բաւականին անդոյն ընթացքով։ Պեստալոցցին իր ուղղութիւնները բոլորը դուրս է բերում մի հիմունքից։ Նրա կարծիքով, ինչպէս աւանդելիք առարկաները, նոյնպէս և աւանդելու եղանակը ենթարկվում են մարդկային բնաւորութեան օրէնքներին, որը և անուանվում էր «մեթոդ», և որը մի չատ մեծ կապ է դցում կրթութեան գործի մէջ։ Այդ հիմնական օրէնքն է, որը պէտք է լինի հիմք ուսումնարանի և դաստիարակութեան։ Բազեդովի մարդասէրների շկոլայի կուսակցութեան նշանաւոր առաջնորդներից մէկն էր։ Խ. Մ.

*) Բազեդով մարդասէրների շկոլայի կուսակցութեան նշանաւոր առաջնորդներից մէկն էր։ Խ. Մ.

որը միայն կարող է փչրել չոր և ոգեղաստիքական կրթութեան հիմունքները, որը տարաղաղաբար կաչկանդել է դեռ ևս հայերիս կրթութեան գործը։ Պեստալոցցիի ուղղութիւնը տանում է դէպի բարոյ կենդանի ձևակերպութիւնը.. նա անհատական թուլութիւնների դէմ գործում է, զօրացնելով անձնական ոյժերը. նա մոլորութիւնների դէմ կռվում է՝ ներքուստ գոյութիւն ունեցող գիտակցութեան սերմը ամեցնելով. նա փչրում է զգայական թուլութիւնները մարդու հոգին կաղդուրելով։ Մարդասէրները նոյնպէս չատ էին խօսում մարդուս բոլոր ընդունակութիւնների ներդաշնակ զարգացման մասին, բայց որովհետև նրանց գլխաւոր նպատակն էր սանիկին տալ նիւթական դիտութիւններ նիւթական կեանքի պէտքերի համար, այդ պատճառով նրանցից պաշտպանվող այդ մեծ հիմունքը այնքան էր մոտենում գործադրութեան, որքան մեր հայերիս մէջ՝ այսօր մեր չատախօս—ինքնապաստան ուսուցիչները գործով ցոյց են տալիս (?) այն ֆրազների հիստաածքները, որոնցով չատ հարուստ են...։

Մասաւոր դիմնասիկան, եթէ այսպէս կարելի է ասել, պէտք է աստիճանաբար ամրացնէ մտքը, որ սա կարող լինի ընդունել և իրագործել գիտութիւնները։ Ներքին կատարելագործութեան պէտք է հասնել անհատական ընդունակութիւնների բնական զարգացումով, և այս պատճառով է որ մանկավարժութեան մէջ սանիկի անձնաւորութիւնը և նրան մօտից ծանօթանալը ամենահարկաւոր պայման է դարձել, պայման,—որը թէև հայ վարժապետին քաջ ծանօթ է տեսականապէս, բայց նա անիրագործելի է համարում գործնականապէս։ Առհասարակ մեր վարժապետական աշխարհի մէջ չատ կան անձինք, որոնք ձգտումն ունեն ցոյց տալու, որ նորագոյն մանկավարժութեան հիմնական կէտերը հայերիս մէջ անիրագործելի են,—առարկելով, թէ մեր հայ սերունդը պատմական պատճառներով իր բնաւորութեան մէջ չատ վատ տարրներ է մտցրել։ Զարմանալի բան։ Միթէ յիրաւի այդքան խոսանացած է հայ մանուկի հոգին և կազմուածքը։ Մենք մեր կողմից կասենք, որ, մեր կարծիքով, այդ մի անհիմն պայման է։ Ճշմարիտ է, բժշկականութեան մէջ «ժառանգութիւնը» և «ժառանգական յատկութիւնները» ընդունվում են, բայց ոչ այդ չափով։ Փորձը հաստատում է մեր ասածը։ Թող այդպէս ասողները իմանան, որ գերմանացւոց երեխաները, օրինակ, երկնային չեն... հեռու չը գնանք։ Արժէր, որ մեր հոգեբան-մանկավարժները այդ հարցը չօշափէին հիմնովին, պատճառ որ, այդ բանը սխալ են հասկանում շատ այնպիսի անձինք, որոնք որ իսկապէս պէտք է այդ մըտքի հակառակ լինէին։ Ամենքին յայտնի է, որ երբ մեր ժողովրդի մէջ յայտնում ես այս կարծիքը թէ «երեխաներին չը պէտք է ծեծել, թէ չը պէտք է նրանց անհատականութիւնը մեռցնել, թէ պէտք է նրանց մէջ զարգացնել ինքնուրոյնութեան ըզգացմունք»—ձեր դէմ խօսում է ոչ թէ միայն ագէտ ամբոխի ներկայացուցիչը, այլ և մտաւոր շրջանի ներկայացուցիչը, առարկելով թէ՝ «հայի երեխան ուրիշ հանգամանքներում է ծնվել և սնվել (դրան ոչ ոք ընդդէմ չէ) և թէ նրան չէ կարելի համեմատել ոչ մի բանով եւրօպացի լուսաւոր ազգերի մանուկների հետ (դրան կատարելապէս ընդդէմ ենք)։

Կրկնում ենք, այս և այսպիսի հարցերը արժանի են ուշադրութեան, որովհետև, մեր իրանց գործին հարազատ պաշտպաններ—ուսուցիչները երբեմն

կան գահի վրա տեսնել Յուսիկ վարդապետին, ուրիշ ոչ ոքի։

Վերը ասացի թէ Նախիջևանը մի քայլ արեց ուսումնարանի և թատրոնի միջոցաւ։ Ինչպէս ուսումնարանը իր ժրաջան հոգաբարձուների միջոցաւ կանոնաւորվել է և յոյսեր է խոստանում, նոյնպէս և թատրոնը նրանց աշխատութեամբ, կարելի է ասել, կանոնաւոր դրութիւն է ստացել։ Մի քանի տարի սրանից առաջ թատրոնական բեմի վրա հանդէս եկաւ շատերին յայտնի Սիսակի (որին Ներսէսեան դպրոցը ուղարկեց արտասահման) քոյրը, որը ժողովրդից ստացաւ հազար ու մէկ անբարոյական մակդիրներ, ածականներ. իսկ այժմ թատրոնի զարդը կազմում են փոքրիկ օրիորդները իրենց մանկական ներկայացումներով։

Ամսոյս 17-ին օրիորդները ներկայացրին ուսումնարանի օգտին «Պոլուխմպերեալ» պիեսան։ Դահլիճը լիքն էր, շատերն էլ տեղ չը գտնելով սոսկված վերադարձան տուն։ Վարագոյրը բացվեցաւ, բեմի վրա երևացին օր. օր. Բաբախանեանը, Ադամեանը, Գասպարբեկեանը և Աթաբէկեանը։ Ներկայացումը կանոնաւոր կերպով առաջ տարան ժողովրդի վրա մեծ ուրախութիւն թողնելով։ Վարագոյրը ծածկվելուց յետոյ կամ նոյն իսկ խաղալու միջոցին սկսվում էր ժողովրդի ծափահարութիւնը և կեցցէները և այն աստիճան, որ մինչև անգամ կարելի է ասել ուրախութիւնը վայրենութեան էր հասնում։ Ներկայացումից յետոյ տրվեցան կենդանի պատկերներ և օրիորդ Բաբախանեանը սրտաշարժ երգեց «Զայնը հնչեց» երգը։ Ուսումնարանը զուտ արդիւնք ստացաւ 60 ր։ Նախիջևանը նորից փափագում է տեսնել այդ մատաղ օրիորդներին բեմի վրա և շատերը կամենում են որ իրանց օրիորդներն էլ, չը նայելով 6—7 տարեկան հասակին, բեմ դուրս գան, այն շատերը, որոնք առաջ օրիորդին բեմի վրա տեսնել սրբապղծութիւն էին համարում։ Ցուսով ենք, որ Նախիջևանցիք անտարբեր չեն գտնվի դէպի ուսումնարանը և թատրոնական բեմը, որոնք ձեռք ձեռքի տուած լուսաւորութեան լապտերներ կը նշանակեն ամենայն մի Նախիջևանցու։ Նախիջևանը փափագում է իր առաջնորդին փոխված տեսնել։

Աւետիս Պողոսեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Մայիսի 22-ին

Շատ ցաւալի է, որ Ախալքալաքի պ. թղթակիցը ախալցխացւոց խղճի և բարոյական պարտաւորութեան մասին ստոր դաղափար է կազմում։ Նկարագրելով իր ուսումնարանների նիւթական տաղնապը, երբէք ի նկատի չէ ունեցել և մեր հանգամանքները. հաւատի եմ, որ եթէ նոյնքան էլ ծանօթանար մեր ուսումնարանների կարօտութեանց, պահանջների և ներքին կեանքի հետ, այն ժամանակ աւելի լուրջ կերպով հակվելու էր դէպի մեր կողմը, բայց այդ թողնենք։ Ա. Նորին բարձր սրբազնութիւն թեմական առաջնորդը այն ժամանակ միայն դիջաւ մեր խնդիրքին, (ոչ թէ ընդդիմադրեցինք), երբոր թեմական վերատեսուչ պ. Աղայեանցը մի ամիս անձամբ մնալով այստեղ, հիմնովին ուսումնասիրեց մեր կարիքները և արդարացի ու օրինաւոր գտաւ մեր պահանջը։ Բ. Ախալքալաքեցիք էլ, այո, Կարապետ սրբազանի դրօշակի տակ ախալցխացւոց հետ միասին դաղթել են Երզրումից, բայց սրբազանը, ըստ իր հեռատեսութեան այնպէս է կարդադրել, որ զրկութիւն չը լինի իր հարազատ օրդւոց մէջ և տուել է իւրաքանչիւրին (նայելով պահանջին և թւոյն) եկամտի աղբիւրներ, նայելով կարիքներին. օրինակ, Ախալցխային կտակել է անչարժ կալուածքներ, Ալէքսանդրապոլին «Եօթն վիրաց» ս. Աստուածածնի պատկերը. իսկ Ախալքալաքին «Գրիգոր Աստուածաբանիչ» անունով հին Աւետարան մը, որը գտնվում է Բուրնաչէթ գիւղում, և եկամտաբեր յատկացրած է Ախալքալաքի ուսումնարանին և տասնեակ հազարաւոր ուխտաւորներ գրաւում է իր դուռը. (եթէ կանոնաւոր հսկողութիւն լինի, կարելի է եկամուտ սպասել ոչ թէ հազար, այլ աւելի ռուբլիներ.)։ Դ. Սրբազանի կտակի երկրորդ յօդուածում յիշուած է, որ կալուածքի եկամուտը բաժանվելու է երեք մասերի. մի մասը Կարապետեան ուսումնարանի պահպանութեան, երկրորդը ս. Փրկիչ եկեղեցւոյ վրա, իսկ երրորդը աղքատաց նպաստելու համար. և այդ երրորդ բաժնից իւրաքանչիւր տարի 50 ռուբլին բաշխել Ախալքալաքի աղքատներին (և ոչ ուսումնարանին)։ Ուրեմն այն յիսուն ռուբլին, որ մենք տալիս ենք Ախալքալաքին ոչ թէ եկամտի տոկոս է, այլ կտակի համաձայն իբրև նպաստ այնտեղի աղքատներին. և Դ. սրբազան երջանիկ կը լիներ Ախալցխան որ եթէ հնար լիներ նպաստել ոչ թէ միայն Ախալքալաքի ուսումնարաններին, այլ և Կարսի, Արդահանի, Բաթումի, Օլթիի, Արդանուճի, Աբասթումանի, Բօստովի և այլ քաղաքների ուսումնարաններին, որտեղ որ գտնվում են Ախալցխացի դաղթականներ։ Մինը քանդելով միւսը չի շինվի։

Ա.։ Ա.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ Ներսէս պատրիարքը Պետերբուրգ հեռագիր ուղարկեց արտաքին գործերի մինիստրին, որի մէջ խնդրում է մինիստրին միջնորդել առաջս Կայսրի մօտ, որ Նորին Մեծութիւնը չը հաստատի իրան Էջմիածնի կաթողիկոս իր վատառողջութեան պատճառով։

«Кавказъ» լրագրում կարդում ենք, որ որպէս տէրութեան ներկայացուցիչ ամենայն հայոց ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի ընտրութիւններին ներկայ եղող ստատսկի սովետնիկ Ս. Ա. Մելիք-Մեհրաբով Նորին պայծառափայլութիւն իշխան Կառավարչապետի հրամանով Ս. Պետերբուրգ է ուղարկվում, անձամբ զեկուցում տալու ընտրութիւնների հետևանքների մասին։

—

ՋՈՒԼՖԱՅԻՑ մեզ հեռագրում են հետևեալը. «Յունիսի 2-ին Ագուլիս ժամանեց Երևանի նահանգապետ գեներալ Շալիկով։ Յունիսի 4-ին անձամբ պարտելով գիւղը, նահանգապետը իր սեփական միջոցներից նշանաւոր գումար նուիրեց յօգուտ վնասվածների և դրդեց հասարակութեանը անյապաղ մի մասնաժողով կազմել բաժանելու այն նպաստները, որ կարող են ստացվել դրսից, և խոստացաւ նոյնպէս միջնորդել կառավարութեան մօտ օգնութիւն հասցնելու Ագուլիսի թշուառ բնակիչներին։»

—

«Эхо» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի դատաստանական պալատի պրոկուրոր նշանակվում է Պետերբուրգի նահանգական դատարանի նախագահ պ. Կուզմինսկի, իսկ նրա տեղը կը գրաւի դատաստանական պալատի անդամ պ. Բիլբասով, որը շատ տարիներ նահանգական դատարանի քրէական բաժնի անդամ է եղել։

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ Լազարեան արևելեան լեզուների ճեմարանի մասնագիտական դասարաններում իրաւաբանական գիտութիւնների դասաւանդումը մտցնելու հարցը շատ շուտով կը վճռվի։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի յունիսի 4-ի նիստում վերջապէս վճռվեցաւ հանդուցեալ Նատալիա Շիօեվի կտակի գործը։ Քաղաքային վարչութիւնը հանդուցեալ Նատալիա Շիօեվի կտակի գործի մասին մի զեկուցում ներկայացրեց, որի բովանդակութիւնը հետևեալն է։ Ն. Շիօեվը վախճանվելով, կտակեց իր մօտ կէս միլիոն արժողութիւն ունեցող կարողութիւնը, արհեստից ուսումնարաններ հիմնելու և առհասարակ Թիֆլիսի մատաղ սերունդին կրթութիւն մատակարարելու համար։ Կային, ի հարկէ, և կտակի ուրիշ կէտեր, բայց այդ կէտը գլխաւորն է։ Հինգ տարի անցնելուց յետոյ կտակակատարները զանազան պատճառներով չը կարողացան կատարել կտակողի կամքը և այժմ նրանք առաջարկում են քաղաքին ընդունել Շիօեվի կայքը, այդ կայքի տերը դառնալ, և նրա հետ միասին իրագործել կտակողի կամքը. մի և նոյն ժամանակ նրանք, կտակակատարները, հրաժարվում են կտակով իրանց հասանելի 10%-ից։ Վարչութիւնը, երկար խորհրդածութիւնից յետոյ, վճռեց ընդունել կտակակատարների առաջարկութիւնը։ Դրամական հաշիւների դրութիւնը անցեալ տարի, ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, հետևեալն էր. ընդհանուր եկամուտը 260,000 ռուբլ էր, իսկ ծախսը 259,000 ռուբլ։ Զեկուցման վերաբերութեամբ ձայնաւոր Ալադաթով նկատողութիւն արեց ասելով, թէ կտակակատարները հանդուցեալ Շիօեվի կալուածքը երևի նրա համար են՝ յանձնում քաղաքին, որովհետև պարտք են առել և այդ պատճառով անհրաժեշտ էր համարում քննել հաշիւները։ Իսկ ձայնաւոր Զէլօկաեվ առաջարկեց շնորհակալութիւն յայտնել կտակակատարներին. նա ասում էր, թէ այդ առաջին անգամն է, որ այդպիսի մի խոշոր գումար նուիրում են քաղաքին և առաջարկում էր մի որ և է բանով պատուել հանդուցեալի յիշատակը։ Գուման վճռեց՝ զեկուցումը հաստատել, Շիօեվի յիշատակը յարդել իւրաքանչիւր տարի նրա հոգեհանդիսատը կատարելով և կտակակատարներին հրաւիրել ուսումնարաններ հիմնելու համար կազմված յանձնաժողովը։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են հետևեալը. «Մարդասպանութիւնը ամենահասարակ բան է դարձել Շիրակի գաւառում։ Նորերումս Շիրակի գաւառի Նորագաղթ գովխաբօրներից մէկին աւազակները խեղդում են Ալէքսանդրապօլից 11 վերստ հեռաւորութեամբ Ղարսի ճանապարհի վրա, խեղդված գովխաբօրին գցում են մի փոսի մէջ և գովխաբօրի ֆուրգոնը իր ձիաներով փախցնում են։ Կարսի գաւառապետ պ. Շաղուբաթով անձամբ շրջում է իր վիճակների մէջ և աշխատում է կալանաւորել աւազակներին, որոնք տարածված են մեր գաւառում։ Մենք մեծ յոյս ունենք պ. Շաղուբաթովի վրա, որ նա միանգամայն վերջ կը տայ այդպիսի անկարգութիւններին և և իրան յանձնված ժողովուրդը խաղաղ պահելու համար ոչինչ միջոց չի խնայի գործ դնել։»

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ Շիրակի ցանքերը շատ և շատ լաւ են և առատ պտուղ են խոստանում։ Կենսական պիտոյքները առատ են և էժանագին։

—

ԴԱՐԱՔԻԼԻՍԱՑԻՑ մեզ հաղորդում են հետևեալը. «Մայիսի վերջին չարունակ թափվող անձրևները լաւ հետևանք չէին գուշակում։ Վերջապէս նոյն ամսի (մայիսի) 29-ին, երեկոյեան 8 ժամին սև ամպերը համատարած երկինքը ծածկեցին և մի քանի վայրկեան չանցած կարկուտը

մեծ դժուարութիւնների դէմ ընկնելով, իրանց լաւ մտքերի և կարծիքների գործադրութեան ժամանակ ընկնում են մի տեսակ յուսահատութեան մէջ, յիշեալ սխալ կարծիքների ազդեցութեան ներքոյ։

Դառնանք խնդրին։ Ընդունակութիւնների զարգացնելը այն պատճառով դարձաւ ուսումնարանի նշանաբանը, դէվիզը, որը, ի հարկէ, հիմնովին հակառակ է մեր հայ ուսումնարանների մէջ տեղատեղ երևացող ձևերին, որոնք թէև զրաւիչ են, բայց սխալ, և որոնք հիմնված են միայն զգացմունքները լարելու ձգտման վրա, տալով աշակերտներին լաւ դաղափարների փչրանքներ, և ի հարկէ այդ սխալ ընթացքին հետևում են գործին անտեղեակ, մանկավարժութեան հիմքին անծանօթ վարժապետները, որոնք միայն ունեն եռանդ իրանց սրտի մէջը, և մի քանի յառաջադէմ մտքերի բեկորներ և ուրիշ ոչինչ...։ Վերջին հիմնական ուղղութեամբ Պեստալոցցին աւելի մօտենում է Ռուսսոին, քան թէ մարդասէրներին, թէև Ռուսսոն անհատի մտաւոր, բարոյական, ֆիզիկական կողմերը զարգացնելիս մի տեսակ անկախութիւն և արձակ է տալիս նրանց, մինչդեռ Պեստալոցցին կրթութեան գործը միշտ մշակութեան և զեկավարութեան կարօտ է համարում։—Պեստալոցցին իր ուղղութեան մէջ մեծ կապ է դնում ընտանիքի և դաստիարակութեան մէջ։ Մարդասէրները այդ միայն խօսքով են ընդունում։ Ռուսսոն միանգամայն բացատրում է ընտանեկան շրջանի ազդեցութիւնը, նրա իդէալը մի այնպիսի դաստիարակ է, որ միանգամայն հեռացնում է սանին ընտանիքից, և միանգամայն չէ վերաբերվում սանին այնպէս, ինչպէս վերաբերվում էր Պեստալոցցին երեխաներին Նեյդօֆի և Ստանիցայի մէջ *), որտեղ Պեստալոցցին համարեա մի մայր էր իր սաների համար։ Ահա թէ ինչ է ասում Պեստալոցցին իր գործելու եղանակի մասին Ստանիցայի մէջ աղքատ և անկիրթ մանուկների հետ։—«Բոլոր օգնութիւնը, բոլոր կարեկցութիւնը, բոլոր ուսուցումը երեխաները անմիջապէս ինձանից էին ստանում։ Իմ ձեռքը նրանց ձեռքի մէջն էր, իմ հայեացքը միշտ պատահում էր նրանց հայեացքներին։ Իմ արտասուքները խառնվում էին նրանց արտասուքների հետ, նրանց ժպիտին պատասխանում էր իմ ժպիտը։ Նրանց ուտելիքը և խմելիքը էր և իմը։ Ես ոչինչ չունէի, ոչ անտեսութիւն, ոչ ծառայ, ոչ բարեկամներ. իմ ունեցած չունեցածը այդ մանուկներն էին։ Երբ նրանք առողջ էին լինում, ես միշտ ապրում էի նրանց մէջը, երբ հիւանդանում էին, ես էլ նրանց հոգում։ Ես քնում էի նրանց հետ միասին։ Երեկոյեանները ես պառկում էի ամենից յետոյ, իսկ առաւօտները զարթնում էի ամենից առաջ։ Ես սովորեցնում էի նրանց և անկողնի մէջ, մինչև նրանց քնելը։» Դնելով կրթութիւնը նոր հիմքերի վրա, տալով նրան իրաւամբ մեծ նշանակութիւն, Պեստալոցցին ոգեորեց ժողովրդական ուսումնարանների ուսուցիչներին, հասկացրեց նրանց իրանց մեծ դերը և ստեղծեց ժողովրդական վարժապետների դասակարգ։ Եւ այն ժամանակից ուսուցիչը իրան ըզգում է իբրև մարդ կրթող, իբրև ամենանշանաւոր գործօններից մէկը ժողովրդական կեանքի մէջ, իբրև ճարտարապետ, որ դնում է այն հիմքը, որի վրա պէտք է յենվի վերջ ի վերջոյ ժողովրդական երջանկութեան շինութիւնը...։ Որքան մեծ դեր...։ Արդեօք մեր շատ անդամ չողոքորթող, ստոր, կրթութիւնը մեռցնող, դաստիարակութեան հոգին սպանող և միմիայն փողին ծառայող վարժապետները (?!) հասկանում են իրանց դիրքը և կոչումը...։

«Ուսուցիչ—ճարտարապետ ժողովրդական երջանկութեան շինութեան» ասում է Պայլմէր։ «Օհո» դուրս կը թռչի մեր հայերի բերանից, որոնք սովոր են նայել ուսուցչի վրա մի տեսակ կասկածաւոր արհամարհական եղանակով.... «Չէ, չէ մի դալա»—կասէ հայ մարդը, որ սովոր է նայել ուսումնարանի վրա, իբրև մի այնպիսի հիմնարկութեան վրա, որը տալիս է միջոցներ աւելի շատ փող-պատիւ-անուն ձեռք բերելու, իսկ վարժապետի վրա, իբրև մի... բայց թողնենք, որ իւրաքանչիւրը ընթերցողներից իրանք այդ միտքը լրացնեն... Այո, շատ մեծ է թէ ուսումնարանի դերը և թէ ուսուցչի գործը և կոչումը։ Եւ այս բոլորը այնքան պարզ է լուսաւոր աշխարհի մէջ, որ բոլոր ոյժերը դարձրած են դէպի այդ կողմը...։ Ժողովրդական ուսումնարանի, ժողովրդական վարժապետի, կրթութեան և դաստիարակութեան խնդիրը Պեստալոցցու մտքերի տարածվելուց յետոյ, դրաւեցին համարեա բոլորի ուշքը։ Գերմանիայում հասկացողները թնդացին և ամեն կողմ շարժումներ տարածեցին, միանգամայն նոր տարրեր և ոյժեր տեսնելով ուսումնարանի պատերի մէջ, որ երկար ժամանակ ծառայել էր ամենաանգոյն նպատակների... Եւ այդ այն ժամանակ, երբ Գերմանիան և նրա ինքնասիրութիւնը զգալի կերպով վիրաւորված էր Ֆրանսիացիներից, և երբ Գերմանիայի նշանաւոր որդիքը, մանաւանդ Ֆիխտէն հրատարակեցին, թէ Գերմանիան կարող է սրբել իրանից այդ արատը միմիայն բարոյական վերածնութեամբ, իսկ այդ բարոյական վերածնութեան նա կարող է հասնել Պեստալոցցիի ուղղութեան դաստիարակութեամբ... Այդ այն ժամանակն էր, երբ ոտի կանգնեց Գերմանիայի ժողովուրդը և խորտակեց ազգութեան կործանիչին, և շնորհիւ յաղթութեան և միութեան արթնացող զգացմունքին, բոլոր ազգը ոգեորվեցաւ ժողովրդական երջանկութեան դաղափարով և դիմեց դէպի կրթութեան գործը, իր հայեացքը և ուշադրութիւնը դարձնելով դէպի ուսումնարանը։ Մի ընդհանուր ձգտումն երևեցաւ կերպարանափոխելու գերմանական կեանքը ներսից...։

Ֆրանսիացիներից ստացած վերքից յետոյ գերմանացիք նայեցին իրանց ներսը և այնտեղ սկսեցին փնտռել իրանց անկման պատճառները... իսկ ազգերի կեանքի մէջ նմանօրինակ երևոյթներ շատ են կրկնվում...։ Ծանօթանալով Պեստալոցցիի հետ, Գերմանիայի արժանաւոր որդիքը, Ֆիխտէի առաջնորդութեամբ ազգային ոգու և կեանքի վերանորոգումը պահանջեցին նշանաւոր-մանկավարժի մտքերի իրագործելով։ Մտքերը սկսեցին յուզվել։ Ամենքը զէնք էին ուզում չարիքի առաջը առնելու համար։ Ամենքը զէնքերի և միջոցների ընտրութիւն էին ուզում անել։ Գիտէին որ թշնամու սուրը ևս շատ սուր է, թնդանօթը շատ ահեղի. Նապոլէօնի ուրուականը ամեն տեղ պտըտում էր... բայց ահա ամեն բան վերջացաւ. միջոցը որոշված էր։ Այդ միջոցը մարդկային ազատութեան և ազգասիրութեան զգացմունքների բուռն վերականգնումն էր և այն՝ ուսումնարանի միջոցաւ։ Զէնքը ուսումնարանն էր...

Ճիշդ են միանգամայն այդ հիման վրա Ֆրիդրիխոս-Վիլհելմ Գ—ի հետևեալ խօսքերը.—«Ճշմարիտ է, մենք զրկուեցանք հողի որոշեալ տարածութիւնից, կայսրութիւնը կորցրեց փայլը, բայց մեր գլխաւոր ցանկութիւնը պիտի լինի ներքին ոյժ

*) Վերջին կէտը՝ Պեստալոցցու համար, մենք ասելիք ենք համարում այստեղ երկար բացատրել. այդ մասին ընթերցողները հարկաւոր տեղեկութիւնները կը գտնեն մեր մի ուրիշ յօդուածի մէջ «Պեստալոցցի» վերնագրով։ Խ. Մ.

ընկոյզի մեծությամբ տեղաց երկրի վրա և շարունակվեց այդ սարսափելի երևույթը մէկ ամբողջ ժամ։ Խեղճ երկրագործները (տեղւոյս բնակիչների մեծ մասը երկրագործներ են) զրկված համարելով իրանց ապրուստի միակ միջոցից, ողբում էին իրանց սև օրը։ Ամենքը սարսափած աղօթում էին, կարծելով թէ դժբախտ ագուլեցիներին պատժակից պէտք է լինեն։ Էլ մարգեր, պարտէզներ, հացաբոյսեր (աշնանացանը միայն) չը մնացին, բոլորը ոչնչացաւ։ Մի և նոյն չարիքից քիչ վնաս չը կրեցին նոյնպէս Ղարաքիլիսայի շրջակայ գիւղերը իրանց արտ ու անդաստաններով»։

—

Նոյն տեղից մեզ գրում են. «Մի ուրախալի երևոյթ, որ օրերումս կատարվեց Ղարաքիլիսայում, մեծ մխիթարութիւն պատճառեց չատերին։ Տեղիս հասարակութիւնը կազմել է մի համայնք հողեր բաժանելու համար, որը իր առաջին խակ նիստում որոշեց վարելահողերը բաժանել իւրաքանչիւր տան և բնակիչների համեմատ։ Այդ գործի սկզբնապատճառը համարվելով պ. Խաչատուր Աբոյեանցը, չէ կարելի հրապարակաւ չնորհակալութիւն չը յայտնել պարոնին իր հմուտ գործավարութեան համար»։

—

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ, որ մայիսի 22-ին դուխաբօրների Արկինա գիւղի մէջ կայծակը խփեց մի կնոջ ու տեղն ու տեղը այրելով՝ մոխիր դարձրեց։

—

Նոյն տեղից մեզ գրում են. «Այսօր տեղս եկաւ Աբխազում անունով մի հայ հինգ հոգուց բաղկացած իր ընտանիքով և դնաց դուխաբօրների Ղարախան գիւղը։ Այդ մարդը առաջ ևս մի քանի անգամ կրօնափոխ է եղած և այս վերջին անգամն էլ ընդունեց դուխաբօրների աղանդը»։

—

Հալաբարի ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու երեցփոխան պ. Ա. Մէլիք-Այվազեանը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ամսիս 9-ին, շաբաթ օրը, Լուսաւորչի տօնն է, վասն որոյ խնդրում ենք հասարակութեանը, մասնաւորապէս հալաբարցոց, որ իրանց այցելութեամբ յարգեն եկեղեցին այդ հանդիսաւոր օրը, մանաւանդ որ Հալաբարի վերատեսուչ արժ. Յ. քահանայ Մարտիրոսեանցը այդ օրը քարոզ է խօսելու։ Հանդէսը կը սկսուի ժամը 2-ից մինչև գիշերվայ ժամի 1-ը, իսկ եկեղեցու գաւիթն էլ շքեղ կերպով լուսաւորված կը լինի։

—

«Neue Freie Presse» լրագիրը հաւատացնում է, որ եթէ ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Ներսէսը դեռ էլի կը շարունակէ և փայլ ձեռք բերելու։ Եւ այդ պատճառով դրականապէս պահանջում եմ որ ամենաջերմեռանդ ուշք դարձնվի ժողովրդական ուսումնարանի վրա»...։ Թագակիր գլուխը ևս լաւ ըմբռնել էր ժողովրդական ուսումնարանի նշանակութիւնը իր ուղիղ դրութեան մէջ...։ Բարոն-Շտէյնը,—որը բաւականին մեծ դեր է խաղացել գերմանական վերածնութեան պատմութեան մէջ,—գրում է. «Ամենից չատ բան պէտք է սպասել Նոր-սերնդի կրթութիւնից և դաստիարակութիւնից։ Եթէ բնական զարգացման օրէնքների վրա հիմնված ճանապարհներով կը սկսենք աճեցնել ներքին մտաւոր ոյժերը, եթէ կաճեցնենք թարմ և առողջ կողմերը կեանքի, եթէ հեռու կը մնանք միակողմանի կրթութիւնից, և կը սկսենք զարգացնել այնպիսի կողմերը, որոնց վրա է հիմնված մարդուս ոյժը և արժանաւորութիւնը,—կարող ենք յուսալ որ առաջ կը գայ բարոյապէս և փիլիսոփայապէս ամուր և պիտանի մի սերունդ և մեր առաջը կը բացվի մի վայլուն ապագայ»։ Այդ խօսքերին մեր կողմից այսքանը կաւելացնենք.—ցերեկվայ լոյսի նման պարզ ճշմարտութիւն։ Ներելի պետական մարդու և «Մանկավարժութեան հօր» մտքերը թափանցեցին չուտով ամեն կողմ։ Դուրս եկան քաղմաթիւ մոլեռանդ քարոզիչներ նրա մտքերի և այդ մտքերը ճառագայթներին նման թափանցեցին թէ խորհրդարանների և թէ պալատների մէջ։ Ահա ինչ է գրում Լուիզա թագուհին իր յիշատակարանի մէջ.—«Ես այժմ կարդում եմ Լենգարտ և Հերտրուդան, ժողովրդի համար Պեստալոցցիի գրած գիրքը։ Որքան գեղեցիկ է, որքան հիանալի կեանք։ Եթէ կարելի էր, կը նստէի կառք, կերթայի Պեստալոցցիի մօտ, արտասուալից աչքերով սեղմելու նրա ձեռքը և չնորհակալութիւն մատուցանելու այդ մեծ մարդուն։ Նա, յիրաւի, ցանկանում է բարիք մարդկութեան։ Եւ ես չնորհակալ եմ նրանից ամբողջ մարդկութեան անունով»։

Այդ միջոցներին Գերմանիայի քանի մի անգամ ամենածանր դրութեան մէջ ընկնելը աւելի լարեց ուշադրութիւնները։ Ամենքը հայրենիքի թէ ներքին և թէ արտաքին աղատութիւնն էին ցանկանում, և հասկացողները այդ աղատութեան լծակ համարում էին միմիայն կանոնաւոր և ուղիղ կրթութիւնը և ժողովրդական դաստիարակութիւնը. և հէնց այդ ճանապարհով էլ ընթանալով, նրանք բոլոր աշխարհին համոզեցին այն մեծ նշանակութեան մէջ, որը վերապահված է ժողովրդական կրթութեան, ժողովրդական կանոնաւոր ուսումնարանին, և Գերմանիան արագաքայլ յառաջ սլացաւ և սլանում է նոյն ուղղութեամբ յառաջադիմութեան ճանապարհով, որը զծված է մեծ—մանկավարժից, վաղուց արդէն դարձած լինելով «համաշխարհային մտաւոր նուաճումի կառավարիչ» ինչպէս ասում է Շմիդտ։ Մի ահագին շարք արժանաւոր մանկավարժներ աւելի և աւելի տարածեցին Պեստալոցցիի մտքերը, որոնցից նշանաւորներն են՝ Շվարց, Նիմեյէր, Օվերբերգ, Դենցել, Դիստերվեգ, Գրաղէր, Գրեֆէ, և որոնց գնացքի պակը դարձաւ, ասենք այդպէս, Ֆրեօբելը, որի «մանկական պարտէզների մէջ ծածկված են ժողովրդական ուսումնարանի շարունակվելի էական զարգացման սերմերը...։ *) Ուրեմն ժողովրդական ուսումնարանի դերը մեծ է։ Այդ անհերքելի է։ Բայց այստեղ յարգելի ընթերցողներից չատերի մէջ գուցէ այդպիսի հարց ծագի—«Ինչ դրութեան մէջ է հայերի ժողովրդական կրթութիւնը, ժողովրդական ուսումնարանը»։ Ցիրաւի որ մտածել տուող խնդիր. ինչ տպաւորութեան տակ է ընկնում իր չորս կողմ դիտողը, այս է խնդիրը։— Ցաւալի է խոստովանել, բայց վատ է, կասկածելի է տպաւորութիւնը։ Դեռ. շարունակում ենք դնալ սովորական դանդաղ քայլերով։ Ասացէք խնդրեմ. ինչ են անում նրանք, որոնք որ իրենց տիտղոսների համաձայն պէտք է բացատրեն ամենքին կրթութեան իսկ ճշմարիտ և նպատակայարմար ընթացքը...

Ինչ են անում նրանք։ Որոնք պէտք է առաջնորդեն հայ թոյլ և տատանուող վարժապետին իր գործունէութեան մէջ, ինչպէս հէնց այդ մասնագէտները իրանք են ասում։ Որքան մութ, կնճռոտ մանկավարժական հարցեր կան այսօր վճռելու մեր կրթութեան գործի մէջ։ Ինչ են մտածում, ինչ են լինում, ինչով են պարապած իրանց Պեստալոցցիի և դրա նմանների ուղղութիւնների մասնագէտ ներկայացուցիչ համարողները...։ Թողնենք ուղղակի պատասխանը։ Նա գուցէ չատ կծու լինի։ Հեռու չը գնանք. մանկավարժութեան այդ մասնագէտները հէնց նոյն դրութեան մէջ կը լինեն մեր մէջ, ինչ դրութեան մէջ որ են «Առողջապահական թերթի» խմբագիր պ. Լ. Տիգրանեանի մասնագիտութեան պատկանող անձինքը, որոնց յարգելի խմբագիրը «Մշակի» վերջին համարներից մէկի մէջ դիմում է։ Խորհուրդ ենք տալիս այդ ներքողը լաւ կարդալ։ Թէև պ. Տիգրանեան ասում է, որ ինքը սիրում է պարզ խօսել, բայց թոյլ ենք տալիս մեզ նկատելու, որ յարգելի բժիշկը իր սրտի զգացածը չէ ասել, կամ չատ քիչ մասն է ասել իր ներքողին նիւթ եղող համալսարանականներին։ Ես կարծում եմ, a propos, որ այդպիսի մտքով ներքողներ կարելի է կարդալ զանազան մասնագիտութեան պատկանող մեր համալսարանականներին՝ մանկավարժներին, լեզուագէտներին, քաղաքատնտեսներին, բժիշկներին, իրաւաբաններին,—որովհետև, ասացէք խնդրեմ, մեր կեանքը դրանցից որին նիւթ չի տալ, և որից այդ կեանքը կարօտ չէ առաջնորդութեան...։ Երևակայել հեշտ է պարոն Տիգրանեանի հոգեկան դրութիւնը, իր թերթի համարները կազմելիս, երբ նա յիշում կը լինէր հայ բժիշկների խօսքով համակրելը և որոտալը, իսկ գործով... այդ նոյնքան ցաւալի, անտանելի է, որքան անտանելի է այն ուսուցչի դրութիւնը, որը զոհելով իր ֆիզիկական, հոգեկան անդորրութիւնը, աշխատում է որքան կարելի է առաջ տանել իր սաներին, և չորս կողմից տգէտ ամբոխը, ուսուցչի վրա անսպասելի կերպով պատրաստվում է յարձակվելու, զանազան տեսակ անհիմն և անտեղի կարծիքներ կազմած լինելով իր գլխի մէջ, գլուխ, որ լաւը վատից զանազանելու ոյժ չունի, որ բարեկամը թշնամուց զանազանելու կարողութիւն չունի...

Ես կարծում եմ, որ պ. Տիգրանեանը չատ անգամ անզգայաբար ասել է «դրանց մեծամասնութիւնից յոյս չը կայ»։ Թոյլ եմ տալիս լինձ կարծելու, որ «Առողջապահական թերթի» մինակ մնացած խմբագիրը չի արգելի ինձ այսպիսի մի յաւելուած անելու իր գրութեանը... Այո, ընթերցող, այդպիսի ներքողներ կարելի է կարդալ մեր չատ գործերի և գործիչների մասին, գործիչներ, որոնք միայն անուն են սիրում, և որոնք իսկապէս չատ բան կարող էին անել. որոնցից չատերը, պէտք է վաղուց գիտենայինն, որ «հունձը մեծ է, մշակներն են քիչ»։ Բայց թողնենք։ «Էլի նահլաթ մեր ոչ— համալսարանականների երեսին»...

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Խոստանում ենք չուտով «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել Ֆրեօբելի հետ, մանաւանդ որ Ֆրեօբելեան մանկական պարտէզները մեր մէջ սկսում են արդէն կեանք առնել, հետևելով մասամբ Շմիդտին, մասամբ աչքի առաջ ենք ունեցել և այս ոնդամ։ Խ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Fortnightly Review» ամսագրում մի մեծ յօդուած է տպված «Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը» վերնագրով, որ ստորագրված է Գ. տառով։ «Times» լրագիրը, մի քանի հատուածներ առաջ բերելով այդ յօդուածից, համարում է դրան, եթէ ոչ Գլադստոնի գրչի արդիւնք, գոնէ նրա ներշնչմամբ գրված։ Միւս կողմից, «Pall Mall Gazette» լրագիրը, որի ունեցած կապը մինիստրութեան հետ ամենին յայտնի է, ասում է, որ «Times» լրագիրը սխալվում է, համարելով վերոյիշեալ յօդուածը պ. Գլադստոնի գրչի արդիւնք կամ նրա ներշնչմամբ գրված։ Բացատրելով նախ, որ անգլիական քաղաքականութեան գլխաւոր նպատակը պէտք է լինի բրիտանական լայնատարած միապետութեան ամբողջութեան պահպանութիւնը իր բոլոր գաղթականութիւններով, յօդուածի հեղինակը խօսում է այն դրութեան մասին, որ բռնում է Անգլիան եւրոպական պետութիւնների վերաբերութեամբ։ «Եւրոպան,—ասում է նա,—նմանում է այժմ մի պատերազմական բանակի. եւրոպական մեծ պետութիւնները պատերազմական այնպիսի պաշար են ձեռք բերել, որոնց հետ Անգլիան չէ կարող մրցել, և եւրոպական քաղաքականութեան վերահսկողութիւնը իրօք պատկանում է Գերմանիային։ Նորերումս գերմանական կանցլերը մեր վերաբերութեամբ մի քանի քաղցր և գովասանական խօսքեր ասաւ։ Նա բազմիցս քաղաքավարի է եղել մեր վերաբերութեամբ, խրախուսելով մեր քաղաքականութիւնը։ Բայց ոչ ոք չէ կարող կասկածել իշխան Բիսմարկի այդպիսի գործունէութեան եղանակի դրդող պատճառների մասին։ Եթէ նա Անգլիայի վրա քաղցր աչքով է նայել, նրա մտածութիւնների գլխաւոր առարկան եղել է Գերմանիան։ Եթէ թոյլ տուեց մեզ կարգադրել Յունաստանի և Զէրնօգորիայի գործերը և բաւականացաւ միայն նրանով, որ հսկում էր միայն մեր բռնած դրութեան վրա Եգիպտոսում, մենք կարող ենք հաւատացած լինել, որ նա ուրիշ դրդող պատճառներ ունէր, քան պարզ քաղաքավարութիւնը. նա համոզված էր, որ այդ գործերում չէ չօշափվում Գերմանիայի ոչ մի կենսական շահը։ Նախ քան որոշել այն դրդող պատճառները, որոնցով, իմ կարծիքով, պէտք է ձեռնարկվի Անգլիան իր արտաքին քաղաքականութեան մէջ, մի հայացք գցենք եւրոպական զանազան պետութիւնների հետ մեր ունեցած յարաբերութիւնների վրա։ Ինչ որ վերաբերում է Գերմանիային և Աւստրիային, մենք չունենք նրանց հետ ուրիշ ընդհանուր ուղիղ շահեր, բացի խաղաղութեան պահպանելը։ Գերմանիան այժմ միջնորդ է հանդիսանում եւրոպական պետութիւնների մէջ, որպէս երբեմն Ֆրանսիան էր այդպիսի միջնորդ։ Այդ պատճառով, կարծում եմ, խոհեմութիւնը պէտք է դրդէ մեզ նպաստել Գերմանիային այդ ուղղութեամբ, բարձրացնել մեր ձայնը ամեն անգամ, երբ յարմար առիթ է ներկայանում և խորհուրդ տալ խաղաղութիւնը պահպանելու վերաբերութեամբ, այդպիսով պարտավոր լինել իշխան Բիսմարկին նրա արած բարի ծառայութիւնների համար և եւրոպական համաձայնութեան սկզբունքը պահպանելուն հաւատարիմ մնալ, եւրոպական պետութիւնների հետ համաձայնութեամբ գործելով։ Իտալիայի վերաբերութեամբ Անգլիան պէտք է ոգեորվի սիրոյ և անկեղծ բարեհաճութեան զգացմունքներով։ Ապա մնում են Ֆրանսիան և Ռուսաստանը։ Այդ երկու պետութիւնների հետ ևս մենք զանազանակերպ բարեկամական յարաբերութիւններ ունենք։ Բայց այստեղ միմեանց հանդիպում են ոչ թէ եւրոպական շահեր, այլ ասիական շահեր, անգլիական և ֆրանսիական շահեր»... Գեղոյ հեղինակը ապացուցանում է, որ անգլիական կալուածքները ապահովելու համար Հնդկաստանում, անգլիական կաբինէտը պէտք է աշխատի բարեկամական յարաբերութիւններ հաստատել Ռուսաստանի հետ և պէտք է մեղմացնէ իր թշնամական զգացմունքները դէպի այդ պետութիւնը։ «Բայց մի և նոյն ժամանակ,—շարունակում է վերոյիշեալ յօդուածի հեղինակը—ոչինչ աշխատանք չը պէտք է խնայել բարեկամական համաձայնութիւն պահպանելու համար Ֆրանսիայի հետ։ Ֆրանսիայի դժբաղդութեան օրից մինչև այսօր այդ երկրում առաջին անգամ յայտնվեցաւ մի մինիստր, որ գիտում է պարզ և ակնայտնի նպատակներին, և այդ հանգամանքը մեզ միջոց է տալիս համաձայնութիւն կայացնել այդ երկրի հետ։ Պաշտպանելով մեր շահերը Եգիպտոսում, չը մոռանանք, որ Ֆրանսիան ևս ունի իր շահերը Նեղոսի հովտում, որոնք աւելի իրական և օրինական կը դառնան նրա գաղթականական կալուածների ընդարձակման պատճառով։ Մենք, անկասկած, կարիք չունենք թշնամական աչքով նայելու այդ ընդարձակման վրա, մինչև որ նա մեզ չէ վնասում։ Մեզ բաւական է հաստատ և վճռողական լինել այնտեղ, ուր մեր կալուածներին վտանգ է սպառնում»։—Հաղորդում ենք, վերջապէս, վերոյիշեալ յօդուածի վերջաբանութիւնը։ «Որպէս եւրոպական պետութիւն, մենք հազիւ թէ կարող ենք առաջնորդողի դեր խաղալ։ Միթէ անմտութիւն չէր լինի ձգտել այնպիսի մի դրութիւն գրաւելու, որ չէ կարող մեզ պատկանել, և, վերջապէս, ոչպիսի շահեր մենք կարող էինք ունենալ այդպիսի ձգտումից։ Մենք կարող ենք դժուարութիւններ ստեղծել, ծիծաղ կամ զզուանք յարուցանել ուրիշների մէջ, բայց բոլոր վնասները մեր կողմը կը մնան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Fortnightly Review» ամսագրում մի մեծ յօդուած է տպված «Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը» վերնագրով, որ ստորագրված է Գ. տառով։ «Times» լրագիրը, մի քանի հատուածներ առաջ բերելով

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐԱՖՖԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԹԱՂԱԳՈՂԻ

ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

(III և IV մաս)

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 ԿՈՊ.

Վաճառվում է „Մշակի“ խմբագրատանը,—„Կենտրոնական գրավաճառանոցում“,—„Կովկասեան գրավաճառանոցում“,—Պ. Շահվերդեանի պաւիլիոնում:

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեղինակին այս հասցէով.

Тифлисъ. Редакція „Мшакъ“.

1—30

Կարող է պատրաստել միջնակարգ ուսումնարանների ամեն դասատան համար: Հասցէն „Մշակի“ խմբագրատանը:

1—3

2,000 ամենից ՀՈՒԶԱԿՎԱԾ բժիշկներ վկայում են և խորհուրդ են տալիս

ԴԿ. ՊՕՊՊԻ

ԳՏԱԾ ՄԻԶՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

բերանը և ատամները պահպանելու այժմ գոյութիւն ունեցող որպէս ամենալաւ միջոցներ: 30 տարվայ ընթացքում փորձված

ԱՆԱՏԵՐԻՆԵԱՆ ԲԵՐԱՆ ՈՂՄՂԵԼՈՒ ՋՈՒՐ ԴԿ. Ի. Գ. ՊՕՊՊԻ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ,

աւստրիական պալատական ատամնաբոյժի, ոչնչացնում է ատամնացաւը, բժշկում է հիւանդ ենդերքը, պահպանում դ մաքրում է ատամները, ոչնչացնում է վատ հոտը, թեթևացնում է մանուկների ատամների բուսնելը, պահպանող միջոց է դիֆտերիտի դէմ, անհրաժեշտ է հանքային ջրեր գործածելու ժամանակ. մի չիշը արժէ 1 ր. 50 կ., կէս չիշը 1 ր. և 1/3 չիշը 60 կոպէկ:

Վերնագրեալ դեղերը

Ատամնային փոշի խոտերից, արդէն կարճատև գործածութիւնից յետոյ ատամները կատարելապէս սպիտակացնում է, չը փչացնելով նրանց: Իւրաքանչիւր կարօքկայի գինը 70 կ.:

Ատամնային օծանելի պաստա ապակէ կարօքկաներում 1 ր. 20 կոպ., փորձված միջոց է ատամները մաքրելու համար:

Ատամի անուշահոտ պաստա բերանի ներքին մասը և ատամները առողջ պահպանելու համար, մի կարը արժէ 35 կոպ.:

Ատամային պլոմբա ամենաուժեղ միջոցը դատարկ ատամները անձնապէս պլոմբելու համար: Փոքրիկ կարօքկայի գինն է 2 բուբլ:

ՊՕՊՊԻ ԽՈՏԻ ՍԱՊՈՆ

ոտքինների, բշտիկների, երեսի բծերի, եղունգների, կոշտ մաշերի և բուսաւոնների, քոսի, ընդհանրապէս կաշու հիւանդութիւնների և անմաքրութիւնների դէմ:

Ծախվում է Թիֆլիսում դեղատան ապրանքների առևտուրի Կովկասեան ընկերութեան մէջ: (2.—1)

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻԱ, ՎՕՐՕՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԷՊ)

Հիւանդները ամեն օր ընդունվում են. Առաւօտեան՝ 9—12½ ժամ, ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—վիրաբուժական, վեներական և ատամի ցաւերի:

10—10½ ժ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի:

10½—12½ ժ. կին—բժիշկ ՇՄԻՏՑ—կանանց, ներքին և աչքի ցաւերի:

10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ԲԼՑԻ—աչքացաւի:

11½—12½ ժ. (երկուշաբթի), ԲԱԲԱՑԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի:

Ներկայեան՝ 5½—6½ ժ.—ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—ամեն օր:

ԲԱԲԱՑԵԱՆ և ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ:

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—6½—7½ ժամը երեկոյեան:

Հիւանդանոցը ունի սենեակներ հիւանդների և ծննդկանների համար: Երթևեկ-հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համախորհրդի (կօնսիլիում) համար 3 մանէթ: Զքաւորները անվճար:

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Սանդալի „Վիշապ“ Տաճկահայ պանդուխտ մշակների կեանքից պատկերը. Հրատարակութիւն Սարգիսբէկեանի. գինն է 40 կոպ.:

Յանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.

Тифлисъ, Головинскій проспектъ, домъ Ананова кв. 30 Софія Петросянъ.

Պ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Թիֆլիսում, ընդունվում է կ. Գօլսի „ԱՐԵՒԵԼՔ“ լրագրի բաժանորդագրութիւնը: „Արևելք“ լրագրի բաժանորդագինն է՝ տարեկան . . . . . 20 ր.

Վեց ամսվանը . . . . . 10 ր.

Հատով ծախվում է. . . . . 10 կ.

Բաժանորդագրութիւնը ընդունվում է ամեն ամսի 1-ին և 15-ին:

3—20

„ԿԱՎԿԱԶ ԵՒ ՄԷՐԿՈՒՐԻ“ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ (Վօրոնցօվսկայա Նաբէրէժնայա, Զիմախօվի տունն) ընդունում է բեռներ հասցնելու համար՝ Պետերբուրգ, Մոսկվա և կասպից ծովի ու Վոլգա գետի բոլոր նաւահանգիստները: 3—3

Վրաստանի և Իմերէթիի Հայոց Վիճակային Կոնսիստորիայի ատենի մէջ նշանակած է ամուրդ սոյն յունիս ամսոյ 8-ին, առանց կրկնաձրդի, կապալով տալու համար Էջմիածնապատկան երկու կրպակները, մէնն Քուրքչիխանայի և միւսն Փռան Թաղի: Անդամ՝ Կարապետ քահանայ Տէր-Սարգսեան:

2—3

ՊԱՍՏԱՌՆԵՐ (ՕՃՈՒՄ)

Ամենանոր նկարներով եկող սեզօնի համար ստացված են մեծ քանակութեամբ

ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ

Օդեսայի գործարանի պահեստում: Լօրիս-Մելիքօվսկայայ փողոց (փօստային), Զուլալովի տունը, հոգևոր սեմինարիայի հանդէպ:

ԲԱԼՈՐ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԳՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԵՆ՝ 10 ԿՕՊԷԿԻՑ ՍԿՍԱԾ: 10—30

Մամուլի տակից դուրս եկաւ

ԿԸԹԹ-ԿԸԹԹ

Ժոզեֆիլ մէկ արարուածով. հեղ. Վ. Մաղաթեանի. հրատարակութիւն Ն. Սիմէօնեանցի. գինն է 25 կոպէկ.

Պահեստը գտնվում է Երևանում. Ն. Սիմէօնեանցի դրախանութում:

ՆՈՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ Է

մեծ քանակութեամբ, եւ ծախվում է աւելի էժան քան թէ ուրիշ տեղեր, ամենայն տեսակ վէնայի մէքել յայանի ՏՕՆԷՏԻ գործարանից: — Ֆրանսիական և ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿԱԹԷ ԿՐԱՒԱՏՆԵՐ 8—30 ր.: Զամոդաններ 2—50—25 ր.: Սակվոյեաժներ 1-30—12 ր:—Ճանապարհի սունդուկներ 5—25 ր: Մաուաններ (Погребцы) 6—25 ր:. 600 հատից աւելի ՍԱՄՈՎԱՐՆԵՐ 60 կ.—1 ր. 20 կ. ֆունտը:—Կուխօնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ:—ՈՒՄԻՎԱԼՆԻԿՆԵՐ ՄՐԱՄՕՐՆԻ 38—75 բուբլի:—Հրացաններ երկու լուլանի 6—32 բուբլի: ՐԵՎՈԼՎԵՐՆԵՐ ամեն տեսակ 3.25—30 ր:—Պատրօններ բեվօլվերների, Սիդարայ Ռէնգարդի ֆաբրիկայից: 5000 ֆունտից աւելի ԹԷՅ (чай) ԵՂԲ. ՊՈՊՈՎՆԵՐԻ:—Պետերբուրգի Միխելսոնի կոֆէ 40—1 ր. 25 կ. ՀԱՅԵԼԻՆԵՐ ամեն տեսակ 3.40—50 ր.: Գինեվաճառների, գարեջրի և հանքային ջրերի (для зельтерскихъ водъ и пива) համար պրոբկայ: Սամովարի և չայի համար պատնոններ: Դանակ չանգալներ գանազան ֆաբրիկաների 1.20—15 ր. դուժինը:—Գոյթուկ (Пухъ) Գրչակոթեր—60—4.50 կ. կրոցը: Դանակներ ջէբ Դանակներ հացի. 25—1 ր. հատը: Կուխոնի 1.40—3.20 կ. Պրիբորը: Միս կոտորելու մաշինայ: Շվէյցարիայի ութեուններ: Բրիտանական չայնիկներ: Կաֆէ տիկներ: Ամեն տեսակ: Կոֆէ աղալու մաշինաներ Ֆրանսիայից: Փոշտի թղթեր: Կոնվերտներ: Սուրգուչներ: Մատիտներ: Երկաթէ գրիչներ: Սագա և տողած քարէտախտակներ: Քարեգրիչներ: Գրէս-Պապիէներ: Գդալներ սեղանի և չայի գործածութեան ՖՐԱԺԷՅԻ, վարշավայի և բրիտանական: Սեղանները 1.25—12 ր.: Իսկ չայինը 45 կոպէկից—5 ր. դուժինը:—Զամոդաններ ամեն տեսակ 75 կ.—12 ր.: Մարդկանց շապիկներ: Գալոշներ: Զօնտիկներ երկու սեռի. 35—6.50 հատը: Գուտապերչից, Ռոկորից, և Շիրմահի սանդրներ: Գլխի, շորի, Սապոկի և կարտի չոտկաներ: Հաշվի շչոտկաներ: Թել Մատակի, կոճի և բրդէ (гарусъ): Ծխախոտի, և քթախոտի ամաններ ամեն տեսակ: Սապօններ հոտաւէտ ամեն գործարանների 3—30 կ. կտորը: Հոտաւէտ ջրեր Բալզէի և ամեն տեսակ Գալանտերէյնի ապրանքներ մշտական գտանվում են այժմ և շարունակ ստացվում են ուղղակի առաջին ձեռքից ՌՈՒՍԱՍՏԱՆԻ և ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ գլխաւոր ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԻՔԱՑԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՑԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ (въ складѣ) Մէջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւն № 13.

Գումարով գնող վաճառականներին ծախվում է առանձին պայմաններով և ձիջումով:

Օտարաքաղաքացիք կարողին դիմել հետևեալ հասցէով: Въ Тифлисъ. МИХАИЛУ И. ТЕРЪ-НИКОГОСОВУ. (2.—1)

Կիրակի, ամսոյս 10-ին, առաւօտեան 11½ ժամին, Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՑ ՄԻԶՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ դահլիճում, կանոնադրութեան 26 յօդուածի զօրութեամբ լինելու է ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ սովորական ընդհանուր ժողովը: Ընկերութեան վարչութիւնը խնդրում է ընկերութեան մեծայարգ անդամներին շնորհ բերել ներկայ լինելու այդ ժողովին:

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այս գինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ գործ է դրվում հեռևեալ դէպքերում: ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՔՍԻ ՅԱՒԵՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել է առաջին մեդալներ հեռևեալ աշխարհահանդէսներին՝ ՓԱՐԻԶԻ 1867 թ., ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻԶԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Կովկասի համար պահեստ. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ:

27—80 (Ի. 2.)

„ԱՂԲԻՒՐ“

Լոյս տեսաւ № № 5—6 (Մայիս-Յունիս) թէ Թիֆլիսում բաժանվեց և թէ օտարաքաղաքացիներին ուղարկվեց ամսոյս մէկին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 5—6

Գարուն (բանաստեղծութիւն) . . . . . Ընծայացի
Գիժ-Լէօ (պատկեր մանկութիւնից) . . . . . Ա. Մեհրաբեան
Սլաքների վէճը . . . . . Զարուհի
Իմ ծիծեռնակը . . . . . Ա. Տ...եանց
Հայկայ-Մրջիւն (Շարունակութիւն) թարգ. . . . . Տ. Գիւզալեանց
Պարոյր Հայկազն (Շարունակութիւն) . . . . . Բաֆֆի
Հացթուխ . . . . . Կ. Կ. Մելիք-Շահն.
Ամառ . . . . . Մ. Փամպուխչեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Էլէքտրականութիւն IV. . . . . Ն. Աբելեանց
Օդը և նրա յատկութիւնները . . . . . Յ. Զոհրաբեանց

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Թեմիստոկլէս. . . . . Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
Փոքրիկ խորամանկն . . . . . ԱՐՇԱԿ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ. Խնդիրներ. Շուտասելուկ:
Նախընթաց № 4-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюня 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. кав.